

Հայ, Նուբար, Նուբար / Hay, Nubar, Nubar

*Հայ, Նուբար, Նուբար,
Նուբար, հայ, Նուբար,
Սասնու սարեր քար ու բար,
Հայ, Նուբար:
Հայ, Նուբար, Նուբար,
Նուբար, հայ, Նուբար,
Իմ բաշխ քու բաշխ բարեն բար,
Հայ, Նուբար:*

*Hay, Nubar, Nubar,
Nubar, hay, Nubar,
Sasnu sarer k'ar u bar,
Hay, Nubar.
Hay, Nubar, Nubar,
Nubar, hay, Nubar,
Im bashkh k'u bashkh baren bar,
Hay, Nubar.*

1. Նուբար մըտավ խիարնոց,
Հայ, Նուբար,
Քաղեց խիար, լըցուց ծոց
Հայ, Նուբար,
Կըդրավ ուր վըզի վըզնոց,
Հայ, Նուբար,
Էղավ ընձի դարդ ու խոց:
Հայ, Նուբար:

1. Nubar mətav khiarnots',
Hay, Nubar,
K'aghets' khia, ləts'uts' tsots',
Hay, Nubar,
Kədrav ur vəzi vəznots',
Hay, Nubar,
Eghav əndzi dard u khots'.
Hay, Nubar.

*Հայ, Նուբար, Նուբար,
Նուբար, հայ, Նուբար,
Իմ բաշխ քու բաշխ բարեն բար,
Ջան, Նուբար:*

*Hay, Nubar, Nubar,
Nubar, hay, Nubar,
Im bashkh k'u bashkh baren bar,
Jan, Nubar.*

2. Սասնու գեղեր էրգու հարս,
Մըտեր են գետ, կըլողեն,
Էլեր են ափ, կըդողեն,
Քընց նըռան հատ կըշողեն:

2. Sasnu gegher ergu hars,
Məter en get, kyloghen,
Eler en ap', kədoghen,
K'ynts' nyrran hat kyshoghen.

*Հայ, Նուբար, Նուբար,
Նուբար, հայ, Նուբար,
Իմ ջան քու ջանին դուրբան,
Ջան, Նուբար:*

*Hay, Nubar, Nubar,
Nubar, hay, Nubar,
Im jan k'u janin ghurban,
Jan, Nubar.*